

«ՀԷՑ»՝ բաշխիչ ցանցի արդիականացում

Երկիր՝	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համարը՝	48957
Բիզնես ոլորտ՝	Էներգետիկա
Ծանուցման տեսակը (պետական/մասնավոր)՝	ՄԱՍՆԱՎՈՐ
Բնապահպանական կարգ՝	B
Խորհրդի նիստը նշանակված է՝	2017թ. հունիսի 21-ին
Կարգավիճակը՝	Հայեցակարգը ուսումնասիրվել է
Ծրագրի տեղեկատվական թերթիկի/ՕՏԹ/ հրապարակման ամսաթիվը՝	

Ծրագրի նկարագիրը

ՎԶԵԲ-ը դիտարկում է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերությանը («ՀԷՑ» կամ «Վարկառու» կամ «Ընկերություն») 80 մլն ԱՄՆ դոլարի չափով ավագ կորպորատիվ վարկի տրամադրման հնարավորությունը՝ ֆինանսավորելու ընկերության 5-ամյա (2016-20)՝ 200 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ ներդրումային ծրագիրը, որն ուղղված է բաշխման ցանցի արդիականացմանը, այդ թվում՝ ամբողջ Հայաստանում սմարթ հաշվիչների ներդրմանը:

Ծրագրի նպատակները

Վարկի նպատակն է աջակցել Վարկառուին Հայաստանի՝ ժամկետանց էներգետիկ ենթակառուցվածքների արդիականացման գործընթացում: Այն կներառի հետևյալը.

(i) Առկա ենթակայանների և գծերի վերակառուցում և արդիականացում, ինչպես նաև հնացած սարքավորումների փոխարինում,

(ii) Էլեկտրաէներգիայի ավտոմատացված հաշվառման համակարգի

ընդլայնում (տվյալների ընթերցանություն և բիլինգ),

(iii) Ցանցի ընդլայնում և նոր միացումներ,

(iv) Ավտոմատ կառավարման նոր համակարգի տեղադրում և այլ օժանդակ ներդրումներ:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ներկա դրությամբ Բանկն ուսումնասիրում է այս ծրագրի պոտենցիալ նշանակությունը Կանաչ տնտեսությանն անցման ("GET") նախաձեռնության համար, քանի որ ծրագիրը էապես կբարելավի էներգաարդյունավետությունը՝ նվազեցնելով տեխնիկական և առևտրային կորուստները, համապատասխանաբար կրճատելով ածխաթթու գազի արտանետումները: Բանկը նաև դիտարկում է Կարգավորող մարմնի հետ քաղաքական երկխոսությանը ներգրավվելու հնարավորությունը՝ անցկացնելու բաշխման սակագների մեթոդաբանության բացերի վերլուծություն՝ համապատասխանացնելու այն միջազգային և ԵՄ լավագույն գործելակերպին և Կարգավորողի համար մշակելու իրականացման ուղեցույցներ:

Հաճախորդի մասին

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ

«ՀԷՑ»-ը փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է Հայաստանի օրենքների համաձայն և ներգրավված է երկրում էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման գործընթացին: «ՀԷՑ»-ի 100% պատկանում է «Տաշիր գրուպ»-ին, որը խոշոր դիվերսիֆիկացված խումբ է և բաղկացած է ավելի քան 200 արդյունաբերական և շինարարական ընկերություններից, որոնք իրենց հերթին ամբողջությամբ վերահսկվում են ծագումով հայ ձեռներեցի՝ Սամվել Կարապետյանի, և նրա ընտանիքի անդամների կողմից:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրված ֆինանսավորումը

80,000,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր արժեքը

200,000,000.00 ԱՄՆ դոլար

Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների ամփոփ նկարագիր

Բկարգ (FUP 2014). Բնապահպանական և սոցիալական խնդիրները, որոնք կապված են գոյություն ունեցող բաշխիչ ցանցերի արդիականացման հետ, ունեն կայքին հատուկ առանձնահատկություններ և կարող են հեշտությամբ գնահատել և մեղմացվել: Ներդրումային ծրագիրը ներառում է ենթակայանների բարեկարգում, սարքավորումների, այդ թվում՝ ավտոպարկի և հաշվիչների արդիականացում, շինկառույցների վերանորոգում և հաղորդման

մի քանի գծերի, այդ թվում՝ 110 կՎ գծի, վերակառուցում: Ծրագիրը կբարելավի էներգետիկ արդյունավետությունը՝ նվազեցնելով տեխնիկական և առևտրային կորուստները, համապատասխանաբար կրճատելով ածխաթթու գազի ուղղակի արտանետումները, համաձայն Բանկի՝ Կանաչ տնտեսությանն անցման («GET») նախաձեռնությանը: Բանկն ունի երկարատև հարաբերություններ ընկերության հետ, և 2008թ. համաձայնեցվել է կորպորատիվ Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր (ԲՄԳՊ):

Անկախ խորհրդատուի կողմից իրականացվող՝ Բնապահպանական և սոցիալական պահանջներին համապատասխանության ներկայիս քննության արդյունքում հաստատվել է, որ ներդրումային ծրագիրը չի պահանջում որևէ տարաբնակեցում կամ փոխհատուցում, և ենթածրագրերից ոչ մեկը չի գտնվում պահպանվող տարածքներում: ԲՄ քննությունը նաև ընդգրկում է ընկերության՝ ներկայիս և անցյալի բնապահպանական և սոցիալական գործունեության աուդիտ և ընկերության կարողությունների գնահատում՝ ծրագիրը ՎՋԵԲ-ի ԿՊ-ներին համահունչ իրականացնելու առումով:

ԲՄ քննությունը հաստատել է, որ ընկերությունն ունի հստակ դիրքորոշում Շրջակա միջավայրի, առողջապահության և անվտանգության, մարդկային ռեսուրսների և հասարակայնության հետ կապերի վերաբերյալ, և այդ դիրքորոշումը մշակվել է ընկերությունում ՎՋԵԲ-ի կողմից նախորդ ներդրումների (2008թ.) ընթացքում: Այն ակտիվորեն կիրառվում է բնապահպանական և սոցիալական հարցերի կառավարման հանդեպ համակարգված մոտեցման միջոցով, կիրառելով համակարգեր, որոնք համապատասխանում են ISO 9001, ISOA 14001 և OHSAS 18001 ստանդարտներին, և նպատակ ունի ապագայում հավաստագրում ստանալ: Ներկայիս ԲՄ քննությունը հայտնաբերել է մի շարք խնդիրներ. օրինակ, կա անհրաժեշտություն ուժեղացնելու ԲԱԱ գործառույթի կարողությունները, այդ թվում՝ առողջապահության և անվտանգության, ինչպես նաև թափոնների կառավարման ոլորտներում: Հատկապես, բարելավումներ են հարկավոր տրանսֆորմատորների յուղերի, թթվային մարտկոցների և ասբեստի պահեստավորման և կառավարման ոլորտներում: Տրանսֆորմատորների յուղի կառավարման հետ կապված հարցերը նախկինում հասցեագրված էին ԲՄԳՊ-ում և իրականացվել էին Ընկերության կողմից միայն մասամբ, նախորդ ներդրման շրջանակում: ԲՄ քննության առաջարկությունների հիման վրա համապատասխան ներդրումները, որոնք կապված են յուղի պահեստների կառուցման և վտանգավոր թափոնների կառավարման ու պահպանման հետ, գնահատվել և ներառվել են ներդրումային ծրագրում:

Ըստ ԲՄ քննության, հետագա բարելավումներ են հարկավոր՝ անհատական պաշտպանության միջոցների, շինարարության ընթացքում կապալառուի կողմից աշխատողների առողջապահական և անվտանգության ռիսկերի կառավարման և հանրային անվտանգության հետ կապված:

ԲՄ քննության հիման վրա մշակվել է նորացված ԲՄԳՊ, և այն պետք է համաձայնեցվի ընկերության հետ նախքան Խորհրդի նիստին ներկայացնելը: ԲՄԳՊ-ն կենտրոնանում է Ընկերության կարողությունների ամրապնդման վրա և բնապահպանական ու սոցիալական ռիսկերի կառավարման հանդեպ համակարգված մոտեցման կիրառման վրա, պաշտոնականացնելով ծրագրի սքրինինգի և ծավալի ներքին ընթացակարգերը ՇՄԱԳ օրենսդրության համաձայն, բարելավելով վնասկար նյութերի և վտանգավոր թափոնների կառավարումը, խստացնելով կապալառուների նկատմամբ ԲՄ պահանջները և ամրապնդելով մարդկային ռեսուրսների ոլորտում ներքին ընթացակարգերը, այդ թվում՝

պաշտոնականացնելով բողոքարկման մեխանիզմը, ինչպես նաև առողջապահական և անվտանգության և անհատական պաշտպանության միջոցների օգտագործման և հանրային անվտանգության նկատմամբ պահանջները: Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի իրականացման միջոցով Ընկերությունը կանդրադառնա հանրության անվտանգության և էներգետիկ արդյունավետության խնդիրներին:

Ծրագրի համար մշակվել են ոչ-տեխնիկական ամփոփագիր և Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան, և, երբ վերջնական տեսք ստանան, դրանք կհրապարակվեն որպես սույն ԾՏԹ-ի հավելվածներ և Ընկերության կայքում: ՎՋԵԲ-ը կանցկացնի ծրագրի մոնիտորինգ՝ ուսումնասիրելով ներդրումային ծրագրի իրականացումը, քննելով Բնապահպանական և սոցիալական ամենամյա հաշվետվությունները և մշտադիտարկելով այցելությունները ըստ անհրաժեշտության:

Տեխնիկական համագործակցություն

Ծրագիրը կմոբիլիզացնի ՎՋԵԲ-ի բաժնետերի հատուկ հիմնադրամի միջոցները՝ աջակցելու ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին («ՀԾԿՀ» կամ «Կարգավորող») բաշխման սակագների մեթոդաբանության բացերի վերլուծության անցկացման գործընթացում: Մինչև 74,900 եվրո կօգտագործվի ներկայիս սակագնային մեթոդաբանության գնահատման համար, որպեսզի այն համապատասխանեցվի ԵՄ և միջազգային լավագույն գործելակերպին:

Ընկերության ներկայացուցչի կոնտակտային տվյալները

Արմեն Արշակյան
arshakyan_AS@ena.am
+37477774000
www.ena.am

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0047, Արմենակյան փող. 127

Բիզնես հնարավորություններ

Բիզնես կամ գնումների հնարավորություններին տեղեկանալու համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

Ընդհանուր տեղեկատվություն

Գնումներին չառնչվող տեղեկատվություն ՎՋԵԲ-ի ծրագրերի մասին.

Հեռ.՝ +44 20 7338 7168, Ֆաքս՝ +44 20 7338 7380

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Հանրային տեղեկատվական քաղաքականություն (PIP)

Հանրային տեղեկատվական քաղաքականությունը ի ցույց է դնում, թե ինչպես է ՎՋԵԲ-ը հրապարակում տեղեկատվությունը և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի ավելի բարձրացնի իր ռազմավարության, քաղաքականության և գործունեության վերաբերյալ իրազեկումը:

Հանրային տեղեկատվական քաղաքականության տեքստին ծանոթանալու համար տեսե՛ք հետևյալ հղումը.

[Text of the PIP](#)

Ծրագրերի բողոքարկման մեխանիզմ (PCM)

ՎՋԵԲ-ը հիմնել է Ծրագրերի բողոքարկման մեխանիզմը (PCM), որպեսզի այն Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի առկա կամ հնարավոր վնասակարության մասին անհատներից կամ կազմակերպություններից ստացած բողոքների անկախ ուսումնասիրություն անցկացնի: ԾԲՄ-ին վերաբերող գործընթացի օրենքների ռուսերեն տարբերակին կարող եք ծանոթանալ այստեղ.

[Rules of Procedure governing the PCM | Russian version](#)

ԾԲՄ-ի ներքո բողոքները պետք է ներկայացվեն ՎՋԵԲ-ի ֆինանսավորման վերջին տրանշից ոչ ուշ քան 12 ամիս անց: Կարող եք կապ հաստատել ԾԲՄ-ի տնօրենի հետ (pcm@ebrd.com) կամ ՎՋԵԲ-ի համապատասխան մշտական գրասենյակի հետ, եթե վստահ չեք, թե ինչ ժամանակահատվածում է հարկավոր ներկայացնել բողոքը: